ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102- 06/08L
Դաս: ՀՊ
«25» ապրիլի 2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 12.1 կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծության արդյունքները՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում թողարկել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով դրամային և մինչև 20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը սահմանել ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի առնվազն 10%-ը:
2. ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանել 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:
3. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Բանկի Խորհրդի առանձին որոշումներով:
5. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում չսահմանել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

6. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24⁰⁰-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
7. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24⁰⁰-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
8. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրենին՝ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ՝ գրանցման:
9. Պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 49/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսեր թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Արզիկ Սուվարյան**